ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՏԴ 801.7
DOI: 10.56246/18294480-2023.15-27

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ԳՊՀ տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի մագիստրատուրայի շրջանավարտ
էլփոստ՝ elena.avetisyan91@mail.ru
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ
ԳՊՀ և ՀՊՄՀ դասախոս, ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ varsik.nersisyan@mail.ru

Տարրական դասարաններում լեզվական գիտելիքների, այդ թվում նախադասության ուսումնասիրումը միջոց է՝ գրական լեզուն ճիշտ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, կապակցված, սահուն խոսք կառուցելու համար: Ուստի նախադասության ուսումնասիրման միջոցով կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը ժամանակակից կրթական գործընթացում կարևոր մարտահրավերներից է, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել տարրական դասարաններում նախադասության ուսուցման արդյունավետությունը, ցույց տալ նախադասության ուսումնասիրման կարևորությունը կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի, լեզվական, տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացման գործում, կատարել եզրահանգումներ, անել առաջարկություններ նախադասության ուսուցման և գրավոր ու բանավոր խոսքի զարգացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Մեր ուսումնասիրության թեմայի նորույթը պայմանավորված է նրանով, որ հիմնախնդրի շուրջ կատարված մի շարք ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացվել են, և ուսումնասիրության շրջանակներում նորովի է ներկայացվել տարրական դասարաններում նախադասության ուսուցման անհրաժեշտությունը, որոշարկվել է դրա տեղն ու դերը կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման գործում: Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ աշակերտներն առօրյայում հաճախ են թույլ տալիս լեզվական սխալներ: Խոսքը վերաբերում է նախադասության անդամների անհամաձայնությանը, սխալ շարադասությանը, խոսքի տրամաբանական սխալ կառուցվածքին, հնչերանգային սխալ արտաբերմանը, գրավոր խոսքում՝ ոչ ճիշտ կետադրությանը և այլն:

Բանալի բառեր՝ *նախադասություն, խոսքի զարգացում, կրկներ դպրոցական, փորձարարական դաս, հարցախույզ.*

Նախադասության հիմնական հատկանիշները և դասակարգման սկզբունքները ժամանակակից հայերենում: Լեզվական յուրաքանչյուր միավոր իր ուրույն տեղն ունի լեզվի կառուցվածքում և յուրահատուկ դեր է կատարում նրա հաղորդակցական գործառության մեջ: Նախադասությունն ամենից առաջ խոսքի, հաղորդակցման նվազագույն միավորն է՝ հաստատումով կամ ժխտումով, որ իրականանում է ստորոգման միջոցով. ստորոգումն էլ կատարվում է միայն ժամանակի, եղանակի, դեմքի ու թվի առկայության դեպքում, իսկ այս բոլորը իրականանում, ավարտուն տեսք են ստանում շարադասության և հնչերանգի շնորհիվ: **Նախադասությունը ստորոգումով, հնչերանգային ավարտվածությամբ և բառերի կանոնավոր դասավորվածությամբ (կամ առանձին բառով) ձևավորված լեզվական հաղորդակցման նվազագույն միավորն է[1]:**

Կառուցվածքային տեսակետից նախադասությունները միատարր չեն. մի դեպքում իրենց կազմում ունենում են միայն գլխավոր անդամներ, մյուս դեպքում՝ դրանց լրացնող անդամներ, ունենում են մեկ կամ մեկից ավելի ստորոգումներ, ունենում են նաև տարբեր հնչերանգներ և այլն: Լեզվաբանական աշխատություններում նախադասությունները դասակարգվում են հետևյալ հիմունքներով.

1. Ըստ գերադաս անդամների առկայության (միակազմ և երկկազմ):

2. Ըստ միայն գլխավոր կամ դրանց հետ երկրորդական անդամների առկայության (համառոտ և ընդարձակ):

3. Ըստ նախադասության անդամների առկայության (լրիվ և թերի):

4.Ըստ արտահայտված մտքի և իրականության հարաբերության (հաստատական և ժխտական):

5.Ըստ խոսքի նպատակադրման և հնչերանգի (պատմողական, հարցական, հրամայական, ըղձական, բացականչական):

6.Ըստ ստորոգումների թվի (պարզ և բարդ)[2]:

Նախադասության ուսումնասիրման առանձնահատկությունները տարրական դասարաններում: Տարրական դասարաններում անցկացվող

---

[1] Տե՛ս Ա.Պապոյան, Խ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 58:

[2] Տե՛ս Ա.Պապոյան, Խ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 59:

լեզվական աշխատանքներն ընդունված է բաժանել երկու խմբի՝ **խոսքի զարգացման** և **լեզվական նախագիտելիքների ուսուցման**: Սակայն այս բաժանումը պայմանական է, քանի որ լեզվական ուսումնասիրություններն ի վերջո նպաստում են խոսքի զարգացմանը[3]: Շարահյուսական գիտելիքների ուսումնասիրման և հմտությունների կիրառման հիմքը նախադասությունն է: Թերևս տեղին է մեջբերել ականավոր լեզվաբան Ս. Աբրահամյանի խոսքը. «Եթե լեզուն մտքերը ձևավորելու և հաղորդելու միջոց է, ապա նախադասությունը մտքի միավորն է, մարդն իր մտքերը հաղորդում է նախադասության միջոցով»[4]:

Նախադասության ուսումնասիրումը տարրական դասարաններում տեղի է ունենում փուլ առ փուլ: **Նախադասության ուսումնասիրման սկզբնական փուլում սահմանում կամ կանոն չի ուսուցանվում**: Այս փուլում, հիմք ընդունելով գիտելիքների ու հմտությունների առաջնային մակարդակը, պետք է նախադասության մասին ունեցած նախագիտելիքները ձևավորել որպես քերականական ավարտուն հասկացություն:

Հարկ է նաև նշել, որ թե՛ նախադասության մասին ընդհանուր ծանոթություն տալիս և թե՛ նախադասության շուրջ տարվող հետագա բոլոր աշխատանքների ընթացքում նախադասության վերաբերյալ ձևավորվող քերականական հասկացության խորացումը երբեք չպետք է կապել միայն պարզ համառոտ նախադասության հետ, որովհետև դա շատ աղքատ և սահմանափակ կդարձնի նախադասության ըմբռնումը[5]: Կարևոր է, որ կրտսեր դպրոցականն ընկալի նախադասության ամենահիմնական, էական հատկանիշը՝ **նախադասությունը պետք է արտահայտի միտք:**

Տարրական դասարաններում կետադրական նշաններից ուսումնասիրվում են ստորակետը, վերջակետը, շեշտը, հարցական և բացականչական նշանները, չակերտները: Կետադրությունը, ինչպես գիտենք, ճիշտ հաղորդակցման կարևոր պայմանն է, որով բացահայտվում է խոսքի իմաստային կողմը: Կրտսեր դպրոցականներին ստորակետի մասին գաղափարը տրվում գործնականորեն՝ նախադասության բազմակի, համադաս անդամների կետադրության առումով: Շարահյուսական գիտելիքների ուսուցման փուլում անդրադառնում են նաև առոգանության նշաններին: Ավելի ուշ աշակերտնե-

---

[3] Տե՛ս Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., 2018, էջ 217:
[4] Տե՛ս Ս. Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Ե., 1973, էջ 45:
[5] Տե՛ս Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա (տարրական դասարաններ), Ե., 1980, էջ 321:

րի նախագիտելիքների կրկնության և դրանց կիրառման ճանապարհով ծանոթանում են նախադասությունների հնչերանգային չորս տեսակներին՝ **հարցական, հրամայական, բացականչական, պատմողական:**

Նախադասության ուսումնասիրման աշխատանքի հետ է կապվում նաև կոչականի ուսուցումը՝ այդ հասկացության ընկալման և կետադրությունը սովորեցնելու առումով: Ա. Ղարիբյանը կոչականը դիտում ՝ որպես «նախադասության նորմալ կառուցվածքի կանոնավորությունը խախտող և նախադասության մեջ ներխուժող ձև»[6]: Թե՛ կետադրության և թե՛ շարադասության առումով կարևոր է նաև ուրիշի խոսք ունեցող նախադասության ուսումնասիրումը: Աշակերտները ձեռք են բերում ընթերցած ուղղակի խոսքը անուղղակի ձևով վերարտադրելու կարողություն: Ուղղակի և անուղղակի խոսք կառուցելու գործնական կարողությունը, ոճական հմտությունը կարևոր նշանակություն ունեն խոսքի զարգացման տեսանկյունից: Տարրական դասարաններում, հիմք ընդունելով նախադասության մասին երեխաների իմացածը, պետք է գաղափար տալ նաև **պարզ** և **բարդ** նախադասությունների մասին:

ՀՀ կրթության մասին օրենքում նշվում է. «Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը»[7]: Ուստի ուսուցչի առջև խնդիր է դրված երեխաներին սովորեցնել զգալ բառը, կառուցել նախադասություններ, հասկանալ տեքստը (թեմա, գաղափար, կառուցվածք): Համաձայն Հանրակրթության պետական նոր չափորոշչի՝ հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներից առաջինը վերաբերում է հենց խոսքի զարգացմանը. «Ծրագրի շրջանավարտը պետք է ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրան-

---

[6] Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954, էջ 218:

[7] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299, ընդ. 14.04.1999թ., Կետ 18:

քային հաղորդակցման միջոցով)»[8]: Խոսքը բաղկացած է երեք հիմնական բաղադրամասերից՝ **բառապաշար, քերականություն** և **խոսք կառուցելու կարողություն**: «Խոսքը լեզվի իրական վիճակն է, իսկական գոյը, խոսքի մեջ է, որ կենտրոնանում, միս ու արյուն է ստանում մեր լեզվական պոտենցիան, խոսքի, որ գոյություն է ստանում ինչպես խոսելու և գրելու, այնպես էլ կարդալու և լուռ, ինքնին մտածելու ժամանակ»[9]:

Նախադասության ուսումնասիրման մեր փորձից (փորձարարական աշխատանք): Մայրենիի ուսուցման ժամանակակից պահանջներում կարևորվում է առաջին հերթին ուսուցման վերջնարդյունքը, և դրան հասնելու համար ընդունելի են բոլոր մեթոդները, որևէ կաղապարում չկա այդ առումով, և այդ հարցում մեծ դեր է տրվում ուսուցչին: Լեզվական տարրական գիտելիքների, այդ թվում նախադասության ուսումնասիրումը տարրական դպրոցում իրականացվում է **վերլուծական-համադրական** մեթոդով: Այս մեթոդի շնորհիվ աշակերտները գիտելիքը, նյութն ընկալում են ոչ թե մեխանիկորեն, այլ տարաբնույթ տրամաբանական-մտածողական գործունեության ճանապարհով. վերլուծություն են կատարում, համեմատում են, գտնում են ընդհանրություններ և տարբերություններ, հանգում են որոշակի եզրակացության և, ի վերջո, ձևակերպում պարզ դատողություններ:

Մեր ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ կատարել ենք փորձարարական հետազոտություն՝ պարզելու տարրական դասարաններում մայրենիի ուսումնասիրման գործընթացում նախադասության ուսումնասիրման արդյունավետությունը՝ որպես խոսքի զարգացման միջոց: Հետազոտությունն իրականացվել է Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոցում 2023թ. փետրվար-մարտ ամիսներին: Հետազոտությանը մասնակցել է 4-րդ դասարանի 31 աշակերտ:

Հետազոտության առաջին փուլում նախադասության վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքների ուսումնասիրման նպատակով ներկայացրել ենք թեստային աշխատանք և խնդրել լրացնել այն: Մեր ուսումնասիրության ամիսներին, համաձայն թեմատիկ պլանի, աշակերտներին գաղափար է տրվում նախադասության հնչերանգային տեսակների մասին,որի ընթացքում անդրադարձ է կատարվում նաև նախադասության և դրա շուրջ տար-

---

[8] Տե՛ս «Հանրակրթության պետական չափորոշիչ», https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, ընդ. 04.02.2021թ., N 136-Ն որոշմամբ, Կետ 9.1:

[9] Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Ե., 1963, էջ 69-70:

վող լեզվական գիտելիքներին: Թեստային աշխատանքում նախադասության վերաբերյալ հարցերից հետո առաջադրված էր ազատ շարադրանք՝ պատմի՛ր քո մասին: Սա հետապնդում էր հետևյալ նպատակը. որպեսզի կարողանանք հասկանալ, հետագայում նաև վերլուծել, թե աշակերտն իր ունեցած գիտելիքը որքանով է կարողանում կիրառել գրավոր խոսքում:

Լեզվական հարցերի արդյունքները գոհացնող էին, ինչը չենք կարող ասել ազատ շարադրանքի վերաբերյալ՝ չնայած այն փաստին, որ աշակերտների մեծ մասը (16 աշակերտ) ուներ բարձր առաջադիմություն: Թերացումներ կային ինչպես մտքի ձևակերպման, նախադասությունների ճիշտ և տեղին կիրառման, այնպես էլ ուղղագրության և կետադրության մեջ: Վերը նշածից կարող ենք եզրակացնել, որ աշակերտներն իրենց ունեցած գիտելիքները հմտորեն չեն կարողանում կիրառել գործնականում, դժվարանում են ինքնուրույն գրավոր խոսք կառուցելու հարցում: Համեմատելով և զուգակցելով արդյունքները՝ կարող ենք փաստել, որ նախադասությանը և նրան բնորոշ քերականական հատկանիշներին անդրադարձ կատարելուց հետո ստացված արդյունքներն ավելի բարձր էին:

Բանավոր խոսքի ձևավորման և զարգացման վրա նախադասության ուսումնասիրման դերի մասին ավելի հստակ պատկերացում ունենալու համար անցկացրել ենք փորձարարական դաս, որի թեման եղել է Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթը[10]: Թեմայի ընտրությունը պատահական չէր. հեքիաթի ուսումնասիրման ժամանակ աշակերտներն արդեն գաղափար ունեին նախադասության հնչերանգային տեսակների մասին, ծանոթացել և սահմանել էին պատմողական, հարցական և հրամայական նախադասությունները, իսկ բացականչական նախադասությունը սահմանեցինք այդ դասաժամի ընթացքում: Բացի այդ, դասի նպատակի մեջ ընդգրկված էին նաև պատմողական, դատողական, նկարագրական, գնահատող բանավոր խոսքի, ինչպես նաև նախադասության տեսակները համատեղելու և վերլուծական-համադրական աշխատանք կատարելու հմտության զարգացումը: Դասի ընթացքում կիրառվել են «ԳՈՒՍ» աղյուսակ, զրույց, «Երեք բանալի և մեկ կողպեք», «Քառաբաժան», հարցուպատասխան, խմբային աշխատանք մեթոդներն ու հնարները, որոնք, կարծում ենք, նպաստում են ճիշտ նախադասություն կազմելու և խոսք կառուցելու կարողության զարգացմանը, հմտությունների ամրապնդմանը:

---

[10] Վ. Սարգսյան, Ս. Գրիգորյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Մայրենի 4, Ե., «Մանմար» հրատ., 2015, էջ 129:

Ե՛վ բնագրի, և՛ քերականական նյութի ամրապնդման համար կիրառեցինք խմբային աշխատանք: Առաջին խմբին հանձնարարվեց հեքիաթը ներկայացնել դերերով, իսկ երկրորդ խմբին՝ պատմել դատողություններով: Բնագրի դերային ներկայացման ընթացքում աշակերտներն իրենց խոսքում գործածեցին տարբեր տեսակի նախադասություններ և ձեռք բերեցին ու ամրապնդեցին դրանք համատեղ գործածելու հմտությունը: Դատողություններով պատմելիս սովորողները վերլուծեցին գործող անձերի վարքը, կարծիք հայտնեցին նրանց մասին, հիմնավորեցին նրանց գործողությունը, կատարեցին դատողություններ և եզրահանգումներ: Այսպիսով՝ կիրառեցին պատմողական, դատողական, նկարագրական և գնահատող խոսք: Դասի ավարտին, կարծում ենք, մենք հասանք մեր առջև դրված նպատակներին և վերջնարդյունքներին, ինչն էլ ամենակարևորն է և ցանկալին ցանկացած ուսուցչի համար:

Կարելի է ասել, որ դերային ներկայացման ժամանակ երեխաներն ավելի ոգևորված էին, բարձր էր հուզական ակտիվությունը, սակայն դա չի նշանակում, որ այն առավել արդյունավետ էր խոսքի զարգացման և քերականական նյութի յուրացման համար: Դատողություններով պատմելը կապակցված խոսքի ձևավորման համար անփոխարինելի է, որովհետև կրտսեր դպրոցականը նյութի, բնագրի մեջ ներմուծում է պատճառահետևանքային կապեր, համեմատություններ, եզրահանգումներ:

Հարցախույզի արդյունքների վերլուծություն: Մեր ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ մեր կողմից անցկացված փորձագիտական հարցմանը մասնակցել է հանրակրթական տարբեր դպրոցների 30 ուսուցիչ: Հարցումն իրականացվել է GOOGLE FORMS առցանց անանուն հարցաթերթիկի միջոցով: Ելնելով հարցման արդյունքների վերլուծությունից ու համադրումից, մեր կողմից իրականացված դասալսումներից՝ կարող ենք եզրակացնել, որ տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին նախադասության ուսումնասիրմանը, ինչպես նաև խոսքի զարգացմանը մեծ նշանակություն է տրվում: Հարցմանը մասնակցած մանկավարժների 90%-ը կարծում է, որ նախադասության ուսումնասիրումը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը, և իրենց տեսակետը հիմնավորում են հետևյալ կերպ. երեխան սովորում է կապակցված խոսքի համար կարևորագույն բաղադրիչի՝ նախադասության կառուցվածքը, սովորում է ճիշտ արտահայտել մտքերը, զարգանում է գրավոր և բանավոր խոսքը: Իսկ մնացած 10%-ը ընդհանրապես դեմ է տարրական դպրոցում լեզվական, քերականա-

կան նյութ ուսուցանելուն՝ պատճառաբանելով, որ աշակերտը նյութն անգիր է անում, մնայուն գիտելիք չէ:

Մեր կարծիքով՝ նման մոտեցումը բխում է ուսուցիչների մանկավարժական փորձից և հմտությունից: Ամեն դեպքում մանկավարժների մեծամասնությունը կարծում է, որ ճիշտ է լեզվական նյութի ուսուցանումը ծանոթության տեսքով և բնագրին զուգակցված՝ նշելով, որ մատուցված լեզվական նյութն ավելի մատչելի է յուրացվում ծանոթ բնագրի վրա, առանձին լինելու դեպքում երեխաներն ավելորդ կծանրաբեռնվեն: Չնայած դասվարների 33,3%-ը ցանկանում է, որ լինեն նաև համապատասխան աշխատանքային տետրեր, իսկ 36,7%-ը դեմ է քերականական նյութի՝ ծանոթության ձևով մատուցմանը և կարծում է, որ երեխան հստակ պետք է սովորի քերականական հիմնական կանոնները: Տարրական դպրոցում առանձնակի կարևորվում է նախադասության տեսակների, մասնավորապես հնչերանգային տեսակների ուսուցումը, քանի որ այն նպաստում է կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի զարգացմանը:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների միայն 36,7%-ին չի գոհացնում նախադասության ուսումնասիրման բաշխվածությունը ըստ մայրենիի առարկայական ծրագրի. նրանք որպես պատճառ նշում են, որ կան կարևոր հասկացություններ, որոնց անդրադարձ չի կատարվում, ինչպես նաև անկանոն և ընդհատումներով են բաշխված նախադասության ուսումնասիրման վերաբերյալ նյութերը: Անդրադառնալով նախադասության վերաբերյալ դասագրքերում տեղ գտած առաջադրանքներին՝ նշենք, որ ուսուցիչները համակարծիք են և կարծում են, որ բոլոր տիպերի առաջադրանքներն էլ կարևոր են և ունեն իրենց ուրույն տեղը լեզվական գիտելիքների ամրապնդման և խոսքի զարգացման գործում:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ մանկավարժների մեծ մասը հաճախ է օգտվում ուսումնաօժանդակ ձեռնարկներից, իսկ նրանց ուղիղ կեսը կարծում է, որ դրանք մատչելի են: Հատկանշական է այն փաստը, որ հարցման մասնակիցների 40%-ը դժվարանում է պատասխանել ձեռնարկների մատչելիության հարցին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք բավականաչափ ծանոթ չեն մեթոդական ձեռնարկներին:

Ժամանակակից ուսուցման գործընթացում ուսուցիչն ազատ է մեթոդներ ընտրելու հարցում, սակայն փորձարարական հարցման արդյունքում ուսուցիչների գերակշռող մեծամասնությունը՝ 93,3%-ը, ցանկություն է հայտնել, որ մայրենիի դասագրքերում քերականական թեմաներին զուգահեռ

տրված լինեն նաև մեթոդական ցուցումներ, առաջարկվեն հստակ մեթոդներ՝ տվյալ նյութն ուսուցանելու համար: Հարցման արդյունքները վերլուծելիս նկատեցինք, որ փոխադարձ անմիջական կապ կա 3 հարցերին տրված դրական պատասխանների միջև: Այն ուսուցիչները, որոնք հաճախ են օգտվում մեթոդական ձեռնարկներից, դրանք համարում են մատչելի, ցանկանում են նաև, որ դասագրքերում առկա լինեն մեթոդական ցուցումներ:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ նշենք, որ տարրական դասարաններում նախադասության ուսումնասիրումը մեծ դեր ունի երեխայի խոսքի զարգացման գործում: Երեխան սովորում է կապակցված խոսքի կարևորագույն բաղադրիչի՝ նախադասության կառուցվածքն ու բնորոշ հատկանիշները և կարողանում է ավելի ճիշտ, դիպուկ և սահուն կառուցել իր խոսքը: Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոցի տարրական դասարաններում դասալսումների ընթացքում ուսումնական գործընթացը դիտման մեթոդով ուսումնասիրելիս արձանագրեցինք, որ կրտսեր դպրոցականները թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքի կառուցման հարցում թերանում են: Ակնհայտ է, որ աշակերտները տեսականորեն գաղափար ունեն նախադասության և դրան բնորոշ հատկանիշների մասին, ծանոթ են տեսակներին, բայց գործնականում կիրառելու հարցում դժվարանում են:

Վերլուծելով մեր կողմից իրականացված փորձարարական դասը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ կրտսեր դպրոցականներն իրենց մտքերն ավելի լավ են արտահայտում բանավոր խոսքում, քան գրավորում, ինչը և կանխատեսելի էր, քանի որ բանավոր խոսքը ձևավորվում է դեռևս երեխայի տարիքային զարգացման ամենավաղ փուլերում: Խոսքի զարգացման տեսանկյունից կարևոր է տարրական դասարաններում սովորողների շրջանում զարգացնել տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողություններ՝ տեքստից առանձնացնելու հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ըստ հաղորդակցման նպատակի նախադասության տեսակները, հակադրելու հերոսներին և նրանց արարքները, վեր հանելու դրանց դրդապատճառները, դրսևորելու դատողական, գնահատողական վերաբերմունք, իրենց վերաբերմունքը հաստատելու համար բերելու փաստարկներ: Հիմք ընդունելով հետազոտության փորձարարական մասում աշակերտներին առաջադրված թեստային աշխատանքի սկզբնական և վերջնական արդյունքների համեմատությունը և զուգակցումը՝ կարծում ենք, որ մայրենիի առարկայական ծրագրում նախադասության ուսումնասիրման բաշխվածությունը ճիշտ չէ: Կրտսեր դպրո-

ցականի թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքի զարգացման համար անհրաժեշտ է տիրապետել նախադասություն կազմելու, ճիշտ և գրագետ խոսք կառուցելու արվեստին, ինչն ապահովելու համար պետք է անընդհատ անդրադարձ կատարել խոսքի տարրական միավորին՝ նախադասությանը:

Ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից՝ առաջարկում ենք մեթոդական և ուսումնաօժանդակ ձեռնարկներում ներկայացնել քերականական նյութի մատուցման առավել արդյունավետ ձևերը՝ այդուհանդերձ ընտրության իրավունքը թողնելով ուսուցչին: Նման մոտեցումը ուսուցողական և կողմնորոշիչ կլինի հատկապես սկսնակ մանկավարժների համար:

Ելնելով ժամանակակից մայրենիի դասագրքերում և առարկայական ծրագրում նախադասության ուսումնասիրման անկանոն բաշխվածությունից և դրա վերաբերյալ ուսուցիչների արձագանքից՝ առաջարկում ենք մշակել նոր առարկայական ծրագիր, ըստ որի նոր տպագրվող դասագրքերում նախադասության և դրան վերաբերող քերականական նյութի ուսուցումը կունենա շարունակական և ոչ թե պարբերական բնույթ՝ առանց երկարաշունչ դադարների, իսկ համակարգված և ուղղորդված լեզվական աշխատանքները կնպաստեն բանավոր և գրավոր խոսքի ներդաշնակ զարգացմանը: Առաջարկում ենք նաև կազմել աշխատանքային տետրեր, որոնցում ընդգրկված կլինեն գրավոր խոսքի զարգացմանը նպաստող ազատ շարադրանք պարունակող առաջադրանքներ:

Հարցման արդյունքներից ելնելով՝ առաջարկում ենք ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման ծրագիր մշակել, որի ընթացքում, բացի մանկավարժների մասնագիտական պատրաստվածության աճից, ուսուցիչները կծանոթանան բնագավառում առկա ուսումնաօժանդակ և մեթոդական ձեռնարկներին: Առաջարկում ենք նախադասության ուսուցման գործընթացում արժևորել ինչպես սահմանումների, կանոնների, այնպես էլ վարժությունների, առաջադրանքների, հարցադրումների, դիպուկ օրինակներ պարունակող տեքստի և նախադասությունների, ինչպես նաև լեզվական խաղերի, գծակարգերի, աղյուսակների, նկարների տեղն ու դերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Ե., «Լույս» հրատ., 1973. 76 էջ:
2. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., ԵՊՀ հրատ., 1963, 733 էջ:
3. Պապոյան Ա., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն /ուսումնական ձեռնարկ/, Ե., ԵՊՀ հրատ., 2003, 462 էջ:

4. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., «Զանգակ» հրատ., 2018, 340 էջ:
5. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., ԵՊՀ հրատ., 1954, 562 էջ:
6. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս, Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի 4, Ե., «Մանմար» հրատ., 2015:
7. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա (տարրական դասարաններ), Ե., «Լույս» հրատ., 1980, 562 էջ:
8. «Կրթության մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299, ընդ. 14.04.1999:
9. «Հանրակրթության պետական չափորոշիչ», https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, ընդ. 04.02.2021:

THE ROLE OF SENTENCE STUDY IN SPEECH DEVELOPMENT AMONG JUNIOR SCHOOLCHILDREN

AVETISYAN YELENA
Graduate of the Master Program of
Elementary Pedagogy and Methodology, GSU
e-mail: elena.avetisyan91@mail.ru
NERSISYAN VARSIK
PHD in Philology, Associate Professor
Senior Researcher at the language institute named
after H. Acharyan NAS RA
GSU, ASPU lecturer
e-mail: varsik.nersisyan@mail.ru

The study of language materials, including sentences, in elementary clases, is a way to understand literary language correctly and make syntactically correct, coherent, and fluent speech. Therefore, developing the speech of junior schoolchildren through the study of a sentences is one of the most important tasks in the modern educational process, making the research topic relevant.The aim of the study is to examine the effectiveness of sentence teaching in elementary classes, to show the importance of sentence learning in the development of coherent speech, as well as linguistic, logical and imaginative thinking of a younger student, to draw conclusions, to make suggestions for enhancing the effectiveness of sentence teaching and developing both oral and written communication skills.

The novelty of the research topic lies in the fact that the results of a number of studies on this issue have been summarized, and within the framework of the study, the need for teaching a sentence in elementary classes is presented in a new way, emphasizing its place and role in the development of speech of junior schoolchildren. Studying the topic is important because scholchildren often make language mistakes in everyday life, including disagreement of the sentence members, incorrect syntax,

incorrect logical structure of speech, incorrect pronunciation of tone, incorrect punctuation in written speech, etc.

Keywords: *sentence, speech development, junior schoolchild, experimental lesson, questionnaire.*

РОЛЬ ИЗУЧЕНИЯ ПРЕДЛОЖЕНИЯ В РАЗВИТИИ РЕЧИ МЛАДШЕГО ШКОЛЬНИКА

АВЕТИСЯН ЕЛЕНА
Выпускница магистратуры отделения
начальной педагогики и методики ГГУ
электронная почта: elena.avetisyan91@mail.ru
НЕРСИСЯН ВАРСИК
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ, АГПУ
Старший научный сотрудник Института языка НАН РА
электронная почта: varsik.nersisyan@mail.ru

Изучение языкового материала, в том числе и предложения, в начальных классах является средством правильного понимания литературного языка, построения синтаксически правильной, связной, беглой речи. Поэтому развитие речи младших школьников посредством изучения предложения является одной из важных задач в современном образовательном процессе, в связи с чем тема исследования актуальна.

Целью исследования было изучить эффективность обучения предложениям в начальных классах, показать значение изучения предложений в развитии связной речи, языкового, логического и образного мышления младших школьников, сделать выводы, дать рекомендации по повышению эффективность обучения предложениям и развитии письменной и устной речи.

Новизна темы нашего исследования обусловлена тем, что обобщены результаты ряда исследований по данной проблеме, и в рамках исследования по-новому представлена необходимость обучения предложениям в начальных классах, его место и роль в развитии речи младших школьников. Изучение темы важно в том плане, что учащиеся часто допускают языковые ошибки в повседневной жизни. Имеется в виду несогласованность членов предложения, неправильная композиция, неправильная логическая структура речи, неправильное произношение, неправильная пунктуация в письменной речи и др.

Ключевые слова: *предложение, развитие речи, младшая школа, экспериментальный класс, анкета.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 17.08.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 21.08.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: